ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԼԻԱՆԱ ԿԱՉՅԱՆՑ ՍՊԸ-ն ՅԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	ֆիրմային անվանումը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
3	Աստրադեզ Գել	ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ	Ախտահանիչ միջոցը (մաշկային հականեխիչը) իրենից ներկայացնում է կիրառման համար պատրաստի գելանման զանգված: Որպես ազդող նյութ պարունակում է իզոպրոպիլ սպիրտ (60%), ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի քլորիդ (ՉԱՄ)՝ 0,1 %, ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում՝ էմուլգատոր, փափկացնող հավելումներ, Ե վիտամին, մածուցիկության կարգավորիչ , ֆունկցիոնալ և հակակոռոզիոն հավելումներ: , մաշկը խոնավեցնող և խնամող բաղադրիչներ, ապաիոնիզացված ջուր: Տոքսիկ չէ, չունի տեղային գրգռող, մաշկա-ռեզորբտիվ և գերզգայունացնող ազդեցություններ: Միջոցի պիտանելիության ժամկետը 5 տարի է: Միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամդրական և գրամբացասական մանրէների (ներառյալ տուբերկուլոզի միկոբակտերիան՝ թեստավորված Mycobacterium terrae-ի վրա, ներհիվանդանոցային վարակները՝ թեստավորված Pseudomonas aeruginosa, Staphylococcus aureus-ի վրա, աղիքային վարակները՝ թեստավորված Escherichia coli, Salmonella typhimurium-ի վրա, հատուկ վտանգավոր վարակները՝ ժանտախտ, խոլերա, տուլարեմիա և այլն,

			լեգիոնելոզի հարուցիչը), վիրուսների (ներառյալ ռինովիրուսները, նորովիրուսները, ռոտավիրուսները, կորոնավիրուսները, ադենովիրուսները, ընդերային և արտաընդերային հեպատիտների, պոլիոմիելիտի, ՄԻԱՎ վիրուսները, մարդու գրիպի և պարագրիպի, այդ թվում «թռչնի» (H1N1) և «խոզի» (H5N1) գրիպների, «ատիպիկ թոքաբորբի» (SARS), հերպեսի վիրուսները, ցիտոմեգալովիրուսային վարակի և այլն), Կանդիդա և Տրիխոֆիտոն ցեղի ախտածին սնկերի նկատմամբ: Միջոցն օժտված է երկարաձգված հակամանրէային ազդեցությամբ՝ առնվազն 4 ժամ: Նյութի պիտանելիության ժամկետը 5 տարի: Տարան դոզավորող պոմպով: Մշակումից հետո ձեռքերի լվացում չի պահանջվում: ISO9001 որակի վկայականի առկայություն: Պիտանելիության ժամկետի առնվազն 75%-ի առկայություն մատակարարման պահին: Ունի ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՅԱՉ-ԷԱՃԱՊՁԲ-26/64 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар		
	фирменное наименование	наименование производителя	технические характеристики
3			